



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

99. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԻՆՉՊԵՍ ՊԱՇՏՊԱՆԵԼ

ԿՈԼԵՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԸ

ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ




ԳՐ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԻՆՉՊԵՍ ՊԱՇՏՊԱՆԵԼ

ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԸ

ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

00036
A II
2429



Պատ. խմբագիր՝ Խ. Ուսանյան
Մասն. խմբ. Ռ. Արմենյան
Տեխն. խմբագիր՝ Պ. Սարգսյան
Մրբագրիչ՝ Սոս Հակոբյան

Հանձնվել է արտադրության 1934 թ. հունվ. 7-ին
Ստորագրվել է տպագրելու 1934 թ. հունվ. 11-ին
Դրավիճակ № 8842 Տիրած 3000 Պատվեր № 8
Մեկ տպագր. թերթում 76.800 տպ. նշ.

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Կուսակցության 17-րդ կոնֆերանսը մեր առաջ մի մարտական խնդիր դրեց—«Յերկրորդ հնգամյակի ընթացքում անասնապահության բնագավառում հասնել այնպիսի արդյունքների, ինչպիսի արդյունքների վոր հասանք հասցի պրոլեմի լուծման խընդրում՝ առաջին հնգամյակում»:

Կուսակցության այս մարտական առաջադրանքը կյանքում կիրառելու համար անհրաժեշտ է պայքարի հանել վողջ կոլտընտեսական մասսաներին ու անասնապահական խորհրդատեսությունների բանվորներին ու աշխատավորներին: Իսկ այդ պայքարը հաջող կազմակերպելու համար անհրաժեշտ է, վոր ամեն մի կոլտընտեսական, ապրանքային ֆերմայի բրիգադիր ու աշխատող, ինչպես և խորհրդատեսության ամեն մի բանվոր ղինված լինի անասնապահության ու անասնաբուժության գեթ նվաղագույն գիտելիքներով: Այդ դեմքը մեր աշխատավոր մասսաներին կարելի չե տալ նաև մասսայական բրոյդուրների ոգնությունը, վորպիսիք, սակայն, մինչև այժմ մենք չենք ունեցել, կամ շատ քիչ ենք ունեցել:

Այդ պակասը լրացնելու համար ՀՍՍՀ Հողօրդկոմատի անասնաբուժական սեկտորի ու Գյուղհրատի նախաձեռնությամբ հրատարակվելիք գրքույկներից մեկն էլ հանդիսանում է սույն «Ինչպես պաշտպանել կոլտնտեսությունից անասունները հիվանդություններից» գրքույկը, վորը գրել է Անասնաբուժական Խնստիտուտի գիտական աշխատող ընկ. Գր. Հարությունյանը:

Մեր սոցիալիստական անասնապահության ասպարիզում աշխատողները սույն գրքույկում կգտնեն այն բազմաթիվ հարցերի պատասխանը, վոր ամեն ուր և ամեն քայլափոխում ծառանում են նրանց առաջ, գործնական աշխատանքների ընթացքում:

Մեզ մոտ ավելի քան լուրջ է դրված մանավանդ կենդանի քաշող ուժի խնամքի ու նպատակահարմար ոգտագործման խըն-

դիրքը: Ձին ու յեզը դեռևս հանդիսանում են տրակտորի աջ թևը, նրա հիմնական ոգնականը: Ամեն անգամ մեր վար ու ցանքի, ինչպես և մշակության ու բերքահավաքի պլանների կատարման գործում խոշոր դեր է կատարում կենդանի քաշող ուժը: Այստեղից ել պարզ է, թե ինչպիսի մեծ դեր ունեն ձին ու յեզը մեր պլանների կատարման գործում, ուրեմն և՛ ինչպիսի հոգատար խնամք պիտի ունենալ դեպի կենդանի քաշող ուժը:

Ընկ. Գր. Հարությունյանի սույն գրքույկը գոհացուցիչ պատասխաններ է տալիս նաև այս բնագավառում ծագած հարցերին:

Ի վերջո, անհրաժեշտ է հիշել, վոր ինչպես սույն, այնպես ել մեր հրատարակած ու հրատարակվելիք գրքույկներն առաջին փորձն են մասսայական անասնաբուժական գրականություն ստեղծելու ուղղությամբ և, անշուշտ, դերժ չեն լինի թերություններից:

Տեղերում աշխատող մասնագետները, ինչպես և հենց անասնապահական արտադրության մեջ յեղած բրիգադիրներն ու շարքային աշխատողներն իրենց անձնական փորձից յեկնելով, դիտողություններ անելով, հնարավորություն կտան մեզ մեր դիտական հրատարակություններում ուղղելու յեղած թերությունները:

Խ. ՈՀԱՆՅԱՆ

ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՅԵՂԱԾ ՉԱՐԻՔՆԵՐԸ

Մեր անասնապահական կուլեկտիվ և խորհրդային տնտեսություններն ամեն տարի մեծ կորուստներ են ունենում անասունների հիվանդությունից և արդյունատվության նվազումից: Վոչ պակաս ֆնասներ են կրում նույն պատճառներից նաև դաշտավարական կուլտնտեսությունները, վորտեղ բանող անասունը դեռևս խոշոր դեր է կատարում: Ծիշտ է, վոր բանող անասունին այժմ փոխարինում է տրակտորը, և տրակտորների թիվը կուլտնտեսություններում որստորե աճում է, բայց այնուամենայնիվ, անասունի, վորոնց թվում և բանող անասունի պահանջը մեր ժողտնտեսության համար այսօր ևս դեռ հրամայողական է և պահանջում է լուրջ ուշադրություն դարձնել անասունների բազմացման և նրանց սլաշտպանման վրա: Դաշտային աշխատանքների հաջողությունը—բերքը, մեծապես կախում ունի վոչ միայն այն հանգամանքից, թե ինչ քանակությամբ բանող անասուններ ունի այս կամ այն տնտեսությունը դաշտային աշխատանքների ժամանակ, այլ նաև նրանից, թե վորչաի ուժեղ և աշխատունակ են այդ անասունները:

Բացի դրանից պետք է ասել, վոր անասունը մի փոքրիկ գործարան է, վոր կարողանում է զանազան տեսակի կերերը ձեռնտու կերպով վերամշակել, դարձնելով նրանց կաթ, միս, ճարպ, բուրդ և այլ մթերքներ: Այդ իսկ պատճառով յուրաքանչյուր կուլտնտեսությունում ձեռնտու յե պահել և աճեցնել կաթնատու կովեր, խոզեր ու վոչխարներ, վորոնց պահպանումը, մանավանդ դաշտավարական կոլխոզում, հնարաժողություն է տալիս հացահատիկների ֆնացորվները շահավետ կերպով ոգտագործելու:

Բայց գիտակցելով անասնապահության կարևոր նշանակությունը կոլխոզում և ձգտելով այդ տնտեսությունը բարելավելու և դարգացնելու, կուլտնտեսականը հաճախ հանդիպում է անասնապահության վոխերիմ թշնամուն. դա—անասունների հիվանդացումն ու մահացությունն է, վոր մեծամեծ ֆնասներ է պատճառում տնտեսություններին:

Բայց անասունների հիվանդություններից հասած վնասը չի սահմանափակվում միմիայն անասունն ի մահացություն մեջ հասնող թվանշանի պատճառով կռվերի կաթնատվությունը նվազում կամ իսպառ դադարում է, մահացու անասունները կորցնում են իրենց կենդանի քաշը, վորից պակասում է նրանց միսն ու ճարպը, վոչ-խարի բուրդը փշանում է, կորցնելով իր քանակն ու վորակը, իսկ բանող անասունը, հաճախ աշխատանքի ամենայնուհեմ ժամանակ, հիվանդություն հետևանքով կորցնում է իր աշխատունակությունը, վորից դաշտային աշխատանքները խոշոր չափով տուժում են:

Բացի դրանից, անասունների հիվանդությունները հաճախ այնպիսի սուր բնույթ են ստանում, վոր ազդում է առանձին կուտնտեսությունների, յերբեմն գյուղերի, նույնիսկ շրջանների վրա և այդպիսով խոշոր վնասներ է պատճառում ժողտնտեսությանը:

Վարակիչ հիվանդությունների ժամանակ արգելվում է անասունների, ինչպես նաև կերի տեղափոխությունը գյուղերի, հաճախ նաև մի քանի շրջանների սահմաններում: Արգելվում է անասունների, անասնամթերքի և կերի վաճառքը, փակվում են ճանապարհները, անասուններին արտավայր չեն թողնում և այլն: Վերջապես չպետք է մոռանալ նաև այն, վոր անասունների մի շարք հիվանդություններ վարակիչ են նաև մարդկանց համար:

Յեթե հաշվի առնենք այն բոլոր վնասները, վորոնք հասնում են անասունների հիվանդության հետևանքով, կտեսնենք, վոր ՊՍՀՄ-ի անասնապահության կրած կորուստը յուրաքանչյուր տարի հասնում է շատ խոշոր գումարի: ՊՍՀՄ-ի Հոգեփոխարինող տվյալներից պարզվում է, վոր միայն մի տարվա ընթացքում անասունների հիվանդացումը խորհրդային Միության մեջ յեղել է 82 միլիոն գլուխ, իսկ մահացությունը—20 միլիոն: Անասնապահության ապրանքային արտադրության կորուստն անասունների հիվանդության հետևանքով (կաթ, միս, բուրդ, ճարպ, կաշի և այլն) հասել է մինչև 200 միլիոն ուղբլու, վորը կազմում է անասնապահության ամբողջ արտադրանքի մեկ հինգերորդ մասը:

Ապա ուրեմն, անասնապահության վերակառուցումն ու վերելքն ավելի արագ թափով առաջ կընթանան այն ժամանակ միայն, յերբ մենք անասնապահության կորուստները հասցնենք նվազագույն չափերի, իսկ դրա համար անհրաժեշտ է, վոր բոլոր կուտնտեսություններն ու խորհրտնտեսությունները վճռական պայքար կազմակերպեն անասունների հիվանդությունների և մահացությունների դեմ:

ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՀԻՎԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Անասուկաների հիվանդութիւնները կանխելու համար ամենից առաջ պետք է գիտենալ, թե ինչից են առաջանում այդ հիվանդութիւնները:

Ինչպես մարդու, նույնպես և անասուկաների մեջ լինում են վարակիչ և վոչ վարակիչ հիվանդութիւններ: Կոլտնտեսութեան անասուկաներին հաճախ մեծ հարված են հասցնում վարակիչ հիվանդութիւնները, տարածվելով յերբեմն վոչ միայն առանձին տնտեսութեան, այլ մի շարք գյուղերի և նույնիսկ ամբողջ շրջանի սահմաններում:

Վարակիչ հիվանդութիւնները մի տեղ յերևալուց հետո հատկութիւն ունին անցնելու հիվանդից առողջին և այդպիսով կարճ ժամանակամիջոցում կարող են հիվանդացնել բազմաթիւ անասուկաներ: Այդ հիվանդութիւնների պատճառը փոշուց ել մանր կենդանի կյակներ են, վորոնք ընկնելով մարդու կամ անասունի մարմնի մեջ, զարգանում, բազմանում, թունավորում են նրան ու առաջացնում այն, ինչ վոր կոչվում և վարակիչ հիվանդութիւն: Գիտութիւնը դրանց անվանել և «մանրէներ» կամ «միկրոբներ», վորոնք չափազանց մանր լինելով, աչքով անտեսանելի յեն և տեսանելի յեն դառնում խոշորացույց ապակիներից պատրաստած գործիքի—մանրադիտակի միջոցով:

Ամեն մի վարակիչ հիվանդութիւն ունի իր հատուկ մանրէն, վորը տարբերվում է ուրիշ հիվանդութիւնների մանրէներից: Անասունի մարմնի մեջ մանրէներն ընկնում են զանազան ճանապարհներով, մեծ մասամբ այդ տեղի յե ունենում անասունի կերի ու ջրելու ժամանակ, յերբ մանրէն ընկնում է կենդանու սաւառից, բայց կարող է ընկնել և ուրիշ ճանապարհներով՝ ներշնչելու ժամանակ—թոքերի մեջ կամ անասունի վերքերի մեջ և ընկնում, իսկ յերբեմն՝ կենդանին վարակվում է միջատների և այլ կենդանիների կծելուց:

Վարակիչ հիվանդութիւնների կասկածելի նշաններ պետք է համարել՝ ա) յերբ մի քանի անասուն միաժամանակ հիվանդանում են միեւնոյն նշաններով, բ) անասունն առանց նկատելի պատճառի հիվանդանում է—մարմնի տաքութիւնը բարձրանում, բերնից լորձոնք է հոսում, աչքերից արտասուք, արյունալուծութիւն է ունենում և ընդհանուր կացութիւնը ճնշված և ուրախ է լինում և գ) կենդանին հանկարծամտ է լինում կամ մի քանի ժամ հիվանդանալուց հետո սատկում է:

Այդպիսի նշաններ նկատելիս անմիջապես պետք է հիվանդանասուռնին մեկուսացնել և մեկուսացնելուց հետո պետք է դիմել անասնաբուժին կամ բուժակին, վորը հիվանդության բնույթը վորոշելով՝ անհրաժեշտ ցուցմունքներ կտա, վորպեսզի հիվանդությունը չտարածվի:

Սակայն ավելի մեծ հարգած հասնում է կուտնտեսության անասնապահությանը նաև վոչ վարակիչ հիվանդություններից: Դրանք են՝ ստամոքսի և աղիքների հիվանդությունները, վերքերը, ջարդվածքները, ճմլվածքները, սմբակները ու կծղակները հիվանդությունները և այլն, վորոնք առաջ են գալիս անասուններին անկանոն ու անփուլթ կերակրելուց ու ջրելուց, կեղտոտ և նեղլիկ շենքերում պահելուց և անկանոն ու անհոգ ոգտագործելու ժամանակ:

ԻՆՉՊԵՍ ԿԱՐՆԼԻ ՅԵ ԿԱՆԻՍԵԼ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՀԻՎԱՆԴԱՆԱԼՈՒՆԸ

Միշտ պետք է հիշել, վոր անասունին հիվանդանալուց պաշտպանելն ավելի հիշտ է, քան հիվանդանալուց հետո նրան բուժելը:

Դրանով չենք ուզում ասել, թե հիվանդացած անասունին բուժելուց պետք է ձեռք քաշել, ընդհակառակը՝ անասունների բուժման գործը յուրաքանչյուր կուտնտեսությունում պետք է որինակելի կերպով կազմակերպված լինի:

Մենք ուզում ենք ասել, վոր կուտնտեսությունը պետք է պաշտպանի իր անասուններին հիվանդանալուց՝ թույլ չտալով տնտեսության սահմաններում հիվանդությունների ծագումն ու տարածումը:

Այդ նպատակին կարելի չէ հասնել կանոնավորելով անասունների շենքերը, նրանց սնուցողը, նրանց պահելու յեղանակը, խնամքն ու շահագործման ձևերը, այլ և կիրառելով անասնաբուժական ամենապարզ միջոցառումները:

ԱՆԱՍՈՒՆՆ ԵՒ ԱՌՈՂՋ ՇԵՆՔԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԻ

Ինչպես մարդու, նույնպես և անասունի առողջության նախապայմաններից մեկն է առողջ բնակարանը, վորովհետև անասունը համարյա իր կյանքի կեսն անց է կացնում շենքի մեջ — գոմում:

Անասունների հիվանդություններից մեծ մասը (ցրտահարություն, թոքերի ու կուրծի բորբոքում, վոսկրացավ և այլն) առաջ

և դալիս անասուններին միջանցիկ քամիների յենթակա, ցուրտ շինքերում պահելուց: Հաճախ կենդանին դեռ փոքր հասակում ցուրտ շենքում մրսած լինելով, ընդմիջա կորցնում է իր արժեքը և միանգամայն անպետքանում տնտեսության համար:

Առանձնապես ֆլասակար ազդեցություն է ունենում անասունի առողջության վրա շենքերի ապականված և հեղձուցիչ ոգը: Այդպիսի շենքում յերկար ժամանակ պահված անասունը թոշնում, թուլանում է և կարող է հիվանդանալ նույնիսկ չնչին պատճառներից: Բացի դրանից, ապականված ողում մշտապես գոյություն էն պահպանում դանազան վարակիչ հիվանդությունների մահրենները. ինչպես որինակ՝ պալարախտը (թոքախտը) ամենից առագ տարածվում է այն դոմերում, վորտեղ ոգը հեղձուցիչ է և ապականված:

Նույն չափով ֆլասակար են նաև խոնավ շենքերը, վորտեղ անասունները հաճախ ցրտահորվում են և նույնպես հեշտությամբ տարածում են վարակիչ հիվանդությունները, ինչպես պալարախտը և ձիերի հեղձախտը (МБТ): Չափադանց ֆլասակար են խոնավ շենքերը մանավանդ մատղաշ անասունների համար. նկատված է, վոր հորթերը և խոճկարները խոնավ շենքերում վատ են աճում և ցավազար են լինում:

Վերջապես շատ վատ է ազդում անասունի առողջության վրա շենքերում լույսի պակասությունը: Գիտությունը պարզել է, վոր արևի լույսը վոչնչացնում է մանրիկներին, այն ինչ, մթության մեջ վարակը ֆնում է շատ յերկար ժամանակ: Դիտողությունները հաստատում են, վոր մութ դոմերում պահված տավարը աճելի հաճախ է հիվանդանում պալարախտով: Բացի դրանից, մութ շենքերում պահված անասունները կորցնում են իրենց աշխուժությունը, թմրած են լինում, ցավազար և կերը ախորժակով չեն ուտում: Մութ շենքը մեծ չափով խանգարում է նաև մատղաշների օճելուն և վերջապես այդպիսի շենքերում մաքրություն և կարգ ու կանոն պահպանելն անհնարին է լինում:

Այդպիսով անասունների առողջության պաշտպանման համար պահանջվում է՝ տաք, մաքուր, թարմ ոգով, չոր և լուսավոր շենք: Միևնույն ժամանակ շենքը պետք է լինի ընդարձակ, վորպեսպի անասունները միմյանց չհրեն, չֆլասեն և հանգստանալու հարմարություն ունենան: Այդպիսի դեպքում հեշտանում է նաև անասունների կերակրելն ու խնամելը:

Դրա համար անասունների կացությունը բարելավելու և

նրանց դանազան հիվանդութիւններէց զերծ պահելու համար կոլտնտեսութիւնները, նոր շէնքեր կառուցելիս կամ հին դռները վերակառուցելիս անպայման պիտի ղեկավարվին անասնաբուժի և անասնապահի ցուցմունքներով, վորովհետև միայն մասնագետը կարող է դործնական խորհուրդ տալ այդ մասին:

Անասուններին առողջ շէնքերով ապահովելն ավելի հեշտ և կոլտնտեսութիւնում, քան մենատնտեսութեան մէջ, վորովհետև կոլտնտեսութիւնն իր տրամադրութեան տակ ունենալով համայնացրած բաւոյ անասուններ ու սայլեր, կարող է ժամանակին հայթայթել ու մթերել անհրաժեշտ շինանյութը և հնարավորութիւն ունի ամբիջ շահավետ կերպով ոգտադործել թե գործիքները, թե աշխատանքը և թե բանուժը:

ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՇԵՆՔԵՐԸ ՊԵՅՔ Ե ՄԱՔՈՒՐ ՊԱՀՆԷԼ

Ամենալավ կառուցված շէնքերն անգամ կարող են վնասել անասունների առողջութեանը, յեթե նրանք մաքրութիւն չեն պահպանում:

Ախոռների ու գոմերի կեղտը, աղբն ու փոշին, պարունակում են վարակիչ հիվանդութիւնների միլիոնավոր մանրէներ, աղբի ու մեզի գոլորշիներով հագեցած ողբ նույնպէս չափազանց վնասակար է անասունների համար: Դրա համար կոլխողի տնասունների շէնքերը պետք է որինակելի մաքրութիւն պահպանեն:

Աղբը պիտի հալաքվի հաճախակի, մեզի համար պետք է կառուցված լինի ակոս, վոր մեզը հոսելով շէնքից դուրս, թափվի հատուկ հորի մէջ: Հատակը պետք է թեքութիւն ունենա մտուրից դեպի ակոսը, վորպէսզի անասունի շուրջը խոնավութիւն չկուտակվի:

Նույնպիսի մաքրութիւն պետք է պահպանել նաև շէնքի շուրջը—բակում: Գարշահոտ աղբով լի բակերը վարակիչ հիվանդութիւնների բուժն են դառնում, բացի դրանից, ամառն այդ աղբի մէջ վխտում և բազմանում են ճանճեր, մոծակներ և այլ միջատներ, վորոնք անհանգստացնում են անասուններին:

ՇԵՆՔԵՐԻ ԱԽՏԱՀԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Անասունների շէնքերում միմիայն մաքրութիւն պահպանելով չի կարելի սահմանափակվել, անհրաժեշտ է նաև ախտահանել, այսինքն՝ հատուկ միջոցներով վոշնչացնել վարակիչ հիվանդութիւնների մանրէներին:

Այն շենքը, վորի մեջ հիվանդացել և կամ սատակել և տնա-
տունը, անհրաժեշտ և մաքրել և ապա ախտահանել, վորի համար
պետք և հավաքել հիվանդի շուրջը յեղած աղբն ու կերի մնա-
ցորդները, և յեթի պարզվի, վոր անասունը սատակել և սիր-
բախտից՝ պետք և այրել կամ անասնադերեզմանոցում թաղել: Ու-
րիշ հիվանդությունների դեպքում՝ զորը կարելի չէ ոգտագործել,
յեթի աղբակույտը վերևից ծածկվի դարմանով և ապա հողով կամ
ավազով: Յերկու շաբաթվա ընթացքում տաքացած աղբի մեջ
վարակը փոշնչանում և և այնուհետև աղբը կարելի չէ ոգտագոր-
ծել հողի պարարտացման համար, առանց յերկյուղի:

Շենքերն ախտահանելու համար գործ են ածում զանազան
քիմիական նյութեր, վորոնցից ամենագործածականը՝ կրակաթն է:
Կրակաթ պատրաստելու համար պետք և վերցնել մի կիլո թարմ
մարած կիւր և մեկ դույլ ջրի մեջ լավ խառնել: Կրակաթով կարելի
չէ սպիտակացնել նաև շենքի պատերը, յեթև կրակաթն ավելի
թանձր պատրաստված լինի (1 դույլ ջրում 2—3 կիլո կիր):

Մսուրների, շենքի տախտակամածների և դույլերի ախտա-
հանության համար կարելի չէ գործածել տաք մոխրաջուր, վորը
պատրաստում են $1\frac{1}{2}$ —2 կիլո փայտի մոխիրը մեկ դույլ ջրում
կես ժամ յեփելով:

Բացի դրանից, ախտահանության համար գործածական են
կարբոլաթթվի կամ կրեոլինի լուծույթները (կես կիլո մի դույլ
ջրում լուծած), մասնավորապես դաբաղի դեմ շատ վստահելի չէ
համարվում ֆորմալինի լուծույթը (300 գրամ ֆորմալինը մի
դույլ ջրում լուծած):

Ախտահանելուց առաջ շենքը պետք և լավ մաքրել, և վոր-
պեսզի փոշի չբարձրանա՝ լավ և նախորոք պատերը և հատակը
առատորեն թրջել ջրով: Մաքրելուց հետո պատերը, հատակը և
շենքի մեջ գտնված բոլոր իրերը սրսկում են ախտահանիչ լու-
ծույթով: Սրսկելու համար կարելի չէ գործածել սովորական գյու-
ղատնտեսական սրսկիչներ, վորոնք գործածվում են խաղողի վա-
զերը բուծելու համար:

Ախտահանությունից հետո ցանկալի չէ շենքը քամով աալ,
դռներն ու պատուհանները բաց թողնելով 3—4 օր, վորից հետո
միայն շենքը կարելի չէ համարել ապահով:

Ախտահանությունն ամենակարևոր միջոցառումներից մեկն
և վարակիչ հիվանդությունների դեմ պայքարելու համար, ուստի
այդ պետք և կատարել մեծ ուշադրությամբ, ճշտությամբ և ա-

նասնաբուժի ցուցմունքներով, վորովհետև անկանոն կատարած ախտահանությունը յերեք իր նպատակին չի ծառայում, ապա-
դյուն է լինում:

Վարակիչ հիվանդություններից անկախ, հիվանդանալու դեպ-
քեր պատահած լինի թե վոչ, յուրաքանչյուր կուտնտեսություն ինք-
նապաշտպանության նպատակով, անասունների և թռչունների շնն-
քերը պիտի ախտահանության յենթարկի տարեկան գոնե յերկու
անգամ և հետեի շննքերի մշտական մաքրությանը՝ չթողնելով աղ-
բի կուտակումը, մեղի լճացումը և այլն:

ԼԱՎ ԿԵՐԻ ՅԵՎ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԿԵՐԱԿՐՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Անասունների մի շարք հիվանդությունները՝ ստամոքսի և
աղիքների խանգարումը, փքանքը, սանջուն (խիթը), վիժումները
և այլն, առաջ են գալիս անկանոն կերակրելուց և կերի վատ վո-
րակից:

Կուտնտեսություններից շատերում կերն անասունին ճիշտ
վորոշած ժամերին չեն տալիս: Յերբ անասունի կերը ժամանակից
ռաշանում է, սոված կենդանին հարձակվում է կերի վրա և առանց
ծամելու՝ ագահաբար ուտելով, խանգարում է իր մարսողություն-
նը: Կամ ընդհակառակը, յեթե կերը տալիս են հաճախ և առանց
չափի՝ անասունը չափազանց շատ ուտելուց հիվանդանում է:

Կուտնտեսության համայնացրած գոմերում, անասնաբուժի
կամ անասնապահի ցուցմունքով պետք է սահմանված լինեն ա-
նասուններին կերակրելու կայուն և վորոշ ժամեր: Ձիերին կեր
տրվում է, սովորաբար որական յերեք անգամ, տավարին ու խո-
ղերին՝ 3—4 անգամ, իսկ վոչխարներին՝ 4 անգամ:

Բացի դրանից, անասունների սննդի պայմանները կանո-
նավորելու համար, անհրաժեշտ է նրանց կերակրել «նորմաներով»,
այսինքն՝ մասնագետի ցուցմունքով անասուններին պետք է տալ
զանազան տեսակի կերեր, սահմանված կայուն ու վորոշ քանա-
կությամբ:

Հազվադեպ չեն, յերբ անասունները փնտավում են կերի վատ
վորակից: Հաճախ նրանց տրվում է փոշոտ կեր (դարման, խոտ),
փոշին լցվելով աչքերի մեջ, առաջացնում է արտասովահոսություն
և աչքերի հիվանդություն կամ մտնելով թոքերի, ստամոքսի ու
աղիքների մեջ՝ հիվանդացնում է նրանց: Այդ պատճառով, փոշոտ
կերն անասունին տալուց առաջ, պետք է շուռ տալ ու թափահա-
րել, բայց այդ արվում է դուրսը և վոչ թե անասունների շննքում:

Ձմրան ընթացքում անասունների մեջ բավական հաճախ նկատվում են սանջլիի (խիթ) և վիթման դեպքեր, դրա պատճառը հաճախ լինում է յեղյամով ու ձյունով պատած կերը:

Յերբեմն կերին կարող են խառնված լինել թունավոր բույսեր, ինչպես որինակ՝ հացահատիկային բույսերի վրա, մեծ մասամբ անձրևային յեղանակներին, գոյանում է «Ժանդառ» կոչված մակարոյձը, վորի ուտելուց ջղաձգություններ են առաջանում, իսկ հղի անասունը վիթում է: Կան և ուրիշ ֆնասակար բույսեր, վորոնք պատճառում են լորձնահոսություն, փքանք, գող, փորլուծ, խիթ և այլն:

Վերջապես կոլտնտեսության անասունները մեծ չափով ֆնասվում են փտած ու բորբոսնած կերից, վորից անասունը հիվանդանում է խիթով, թոքերի բորբոքումով, փքանքով, ստամոքսի և աղիքների հիվանդությամբ և այլն: Այս դեպքում առանձնապես նրբադգաց են մատղաշներն ու հղի անասունները, վերջիններքի մեջ հաճախ տեղի յե ունենում մասսայական վիթում: Ինչ վերաբերում է բորբոսնած կերին, իհարկե, ամենից լավ է իսպառ չգործածել այդ, իսկ ծայրահեղ դեպքերում գոնե անֆնաս դարձնել այդպիսի կերը: Այդ արվում է կերը յերկար ժամանակ արևի և քամու տակ չորացնելով, ջրկելով և կամ յեռացող ջրում խաշելով: Իսկ ինչ վերաբերում է փտած կերին, այդպիսին չի կարելի գործածել անասունի համար վոչ մի դեպքում:

Մեր առածներից հետևում է, վոր անասուններին հիվանդություններից զերծ պահելու համար կոլտնտեսությունը պարտավոր է, բացի կերակրման ձևը կանոնավորելուց, առանձնապես ուշադրություն դարձնել կերի վորակի վրա:

ԱՆԱՍՈՒՆՆԵՐՆ ԱՌՈՂՋ ԱՐՈՏԱՎԱՅՐԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՆ

Յուրաքանչյուր տարվա կեսը և նույնիսկ ավելին, կոլտնտեսության համայնացրած հոտն արածում է արոտավայրում, ուստի առողջ արոտավայրի նշանակությունը շատ մեծ է անասունների համար, վորովհետև նրանք արոտավայրում, մշտապես գտնվելով մաքուր ոդում, ազատ շարժումներով, առատ լույսի տակ և թարմ կերի պայմաններում՝ կազդուրվում և աշխուժանում են:

Արոտավայրի կյանքը նպաստում է կենդանու աճմանը. նա զարգանում, ամրանում և դիմացկուն է դառնում զանազան հիվանդությունների դեմ: Արոտավայրի կյանքը բարերար ազդեցություն ունի նաև հղի անասունների համար, վորոնց ծննդաբերու-

թյուշնը հեշտանում է և և սերունդն առողջ է ծնվում: Զանազան վարակիչ հիվանդությունները, ինչպես պալարախն ու ծննդական տենդը, տարածվում և ծանր ընթացք են ունենում ավելի հաճախ գոմում, քան արոտի ժամանակ:

Սակայն անհաջող ընտրած արոտավայրը և անասունների արածացնելու անկանոն ձևերը, վորոշ դեպքերում, փոխանակողութի, յերբեմն մեծ վնասներ են պատճառում հոտին, վորի համար հատուկ ուշադրություն պետք է դարձնել արոտավայրի ընտրության վրա:

Ամենից առաջ պետք է զգուշանալ, վոր արոտավայրը վարակված չլինի դանազան հիվանդություններով, վորովհետև հալվադենպ չեն, յերբ արոտավայրը վարակված է լինում սիբիրախտով, մանավանդ յեթե այնտեղ թողած են լինում այդ հիվանդությունից սատակած անասունների դեակներ: Անտառային վայրերում և թփուտներում մշտապես լինում են բազմաթիվ տիգեր, վորոնցից անասունը կարող է վարակվել պիրոպլազմոզով: Ծահճային վայրերում վխտում են դանազան տեսակի ճիճուների սաղմեր, վորոնք պատճառում են անասուններին ճիճվային ծանր հիվանդություններ:

Ապա ուրեմն, արոտավայր ընտրելիս՝ ամենից առաջ պետք է պարզել, թե արդյոք առողջ է այդ վայրը, թե վոչ. և վորովհետև այդ խնդիրն ամենից լավ կարող է պարզել անասնաբույժը, ուստի արոտավայրի ընտրության հարցում նրա մասնակցությունն ու յեղրակացությունն անհրաժեշտ են: Իսկ յեթե ինչ-ինչ պատճառներով անասնաբուժի մասնակցությունը հնարավոր չէ, հարկավոր է գիտնալ և հիշել, վոր արոտավայրը հեռու պիտի լինի անասնագերեզմանոցից, աղբակույտերից, լճացած կեղտոտ ջրերից և մեծ ճանապարհներից: Ամեն կերպ պետք է խուսափել խոնավ ու ճահճոտ վայրերից, իսկ այն վայրերում, վորտեղ անասունները հաճախակի հիվանդանում են պիրոպլազմոզով՝ պետք է խուսափել նաև թփուտներից ու անտառներից:

Անասուններին դարնանը դոմերից արոտավայր փոխադրելը պետք է տեղի ունենա վորոշ հետևողականությամբ: Գարնանային թարմ խոտը, վոր կենդանիներն ուտում են մեծ ագահությամբ, պատճառում է փքանք ու խիթ (ոանջու), հաճախ մահացու հետևանքով: Դրա համար սկզբում պետք է հոտը դուրս թողնել արոտավայր մի քանի ժամով և որըստորե ավելացնել այդ ժամանակամիջոցը: Բացի դրանից, արոտավայր քշելուց մի քանի որ առաջ, հետզհետե պետք է վարժեցնել անասուններին արոտի,

ավելացնելով նրանց չոր կերին փոքր բաժիններով նաև հյուլթալի թարմ խոտ:

Միևնույն հետևողականությունը պետք է պահպանել, յերբ՝ արոտաշրջանի վերջերին անասունները պիտի փոխադրվեն դոմ: Այս դեպքում, գոնե մի շաբաթառաջ, պետք է հետզհետե նվազեցնել թարմ կերը և քիչ-քիչ վարժեցնել չոր կերին:

Առանձնապես ուշադրություն է գոռություն է պահանջվում մատղաշների և հղի անասունների վերաբերմամբ: Չափապանց շուտ արոտի դուրս բերելու դեպքում նրանք, կանաչ խոտի սակավութեան պատճառով, շատ են պտտում կերի հետևից, սոված են մնում, հոգնում են և զարնանային ցուրտ քամիներից մրսում ու ցրտահարվում են: Բացի դրանից, պետք է խուսափել ցողապատ կամ յեղյամով ծածկված արոտներից, վորից, ինչպես ասել ենք, անասունը հիվանդանում է խիթով, իսկ հղիները վիժում են: Չափապանց վտանգավոր է անասունի համար նաև նորաբույս կամ յեղյամով ու ցողով ծածկված առվույտը, վորն ուժեղ փքանք է առաջ բերում և համարյա միշտ ել վերջանում է մահացությամբ:

ԼԱՎ, ՏՆՎԱՐԱԾԻ ՀՈՏՆ ԱՌՈՂՋ Ե ԼԻՆՈՒՄ

Անասունների հոտը հիվանդություններից պաշտպանելու համար մեծ դեր է կատարում տավարածը:

Ինչպես վերևում ասացինք, հոտը տարվա կեսն անց է կացնում արոտավայրում, վորտեղ անասունները մշտական շփման մեջ լինելով իրար հետ՝ վարակվելու նպաստավոր պայմանների մեջ են դառնում: Բացի դրանից, յեթե արոտավայրում հայտաբերվում է վորեւե վարակիչ հիվանդություն, արոտավայրն ևս վարակվում է և այնուհետև ամբողջ հոտը մեծ վտանգի յե մատնվում: Այա, ուրեմն՝ վորքան հմուտ և հեռատես պետք է լինի տավարածը (նախընտրել), վոր միշտ կարողանա խուսափել անըսպասելի չարիքից:

Սակայն պետք է խոստովանել, Վոր մինչև այժմ ել կոտորնոտեություններից շատերում սխալ կարծիք է տարածված տավարածի դերի և պարտականությունների մասին:

Շատ անգամ այդ պաշտոնին նշանակում են յերեխաներին, անկարող ծերունիներին, իսկ յերբեմն՝ նույնիսկ հնչմանդամներին, յենթադրելով, վոր նրա պարտականությունները շատ պարզ են ու հեշտ՝ պետք է հսկել, վոր հոտից անասուն չկորի:

Մինչդեռ տավարածը անտեսության պատասխանատու աշ-

լատաւորացիներէն մեկն եւ Լաւ տաւարածը պետք ե հոտի իսկա-
կան առաջնորդն ու կարգադրիչը լինի, նա լաւ ուսումնասիրած
պիտի լինի արոտավայրը և գիտենա, թե՞ վորտեղ կարիլի յե պա-
հել հոտը, ուր և յերբ տեղափոխել, ինչ տեղերէն պետք ե խու-
սափել: Տաւարածը պետք ե սիրի անասուններին և դիտելով՝ հա-
կանա անասունի վրա նկատված փոփոխությունը. նա իր փորձ-
ված աչքով պետք ե անմիջապէս նկատի ամբողջ հոտի միջից հի-
վանդ անասունին և իսկույն առաձնացնի նրան առողջներէն:
Վերջապէս նա պիտի ծանոթ լինի վարակիչ հիվանդությունների
նշաններին և գիտենա անասնաբուժական առաջին ոգնութեան
ձևերը:

Պարզ ե ուրեմն, վոր տաւարածի ընտրությունը պետք ե
կատարել մեծ ուշադրութեամբ, վորպէսզի հոտի հսկողությունը
հանձնարարված լինի ընդունակ և վստահելի մարդու:

Լաւ տաւարած ունենալու համար, նպատակահարմար ե
նախորոք, գոնե մի ամսով, ուղարկել նրան շրջանի անասնաբու-
ժարանը, վորտեղ նա մասնագետից կարող ե սովորել անասունների
առողջապահութեան տարրական պահանջները, հիվանդությունների
նշաններն ու առաջին ոգնութեան ձևերը:

Առանց այդպիսի գիտելիքների, տաւարածը լերքումն առա-
ջին ոգնություն ե հասցնում «ըստ իր հայեցողութեան» և հա-
ճախ փոխանակ հոնքը շինելու, աչքն ել ե հանում:

ԱՌԱՏ ՅԵՎ ԱՌՈՂՋ ԶՈՒՐ

Փոքրաթիվ չեն անասունների այն հիվանդությունները, վո-
րոնք ստացվում են վատառողջ ջրաբերից և անկանոն ջրելուց:
Ծատ դեպքերում անասունի ջրաբքն սկիզբ ե ծառայում մի շաբթ
հիվանդությունների (սիբիրախտ, խլախտ, դաբաղ և այլն):

Զափազանց վտանգավոր պետք ե համարել աղբակույտերի կամ
անասնագերեզմանոցի մոտ գտնված ջրաբըրը, նմանապէս վնասա-
կար են ճահճացած ու լճացած ջրերը, վորոնք պարունակում են
իբենց մեջ վարակիչ հիվանդությունների բազմաթիվ մանրէներ
և ճիճուների սաղմեր:

Ամենից առողջարարը համըվում ե արտեղյան հորերի ջուրը,
բայց վորովհետեւ մեր պայմաններում կոլտնտեսութեան անասուն-
ներին ջրում են առավելապէս գետերում, առուներում, լճերում
կամ լճակներում, անասունների առողջությունն ապահովելու հա-
մար անհրաժեշտ ե կիրառել հետեյալը.

Գեառիքը, առուները, լճերն ու լճակները պետք է ամենայն միջոցներով պաշտպանված լինեն վարակուժից, այդ նպատակով անասնագրեզմանոցները, աղբակոյտերը, կեղտոտ ջրերի հորերը և այլ նման կեղտերի կուտակումները պետք է հեռու պահել հիշված ջրատեղերից: Անհրաժեշտ է նմանապես վերջ դնել այն այլանդակ սովորությանը, վոր կոլտնտեսություններից մի քանիսը թույլ են տալիս, այն և՛ ստեղծած անասունի կամ թռչունների դեղակներ, աղբ և ամեն տեսակ կեղտոտություն բերում թափում են դեռի ափին կամ յերբեմն ուղղակի ջուրը: Շատ դեպքերում այդ անում են գուցե և անգիտակցաբար, բայց ըստ երևթյան դա փաստարարություն է:

Գետից կամ առվից ոգտվելու ժամանակ, անասուններին պետք է ջրել հոսանքի վերևի մասում, վորտեղ ջուրը համեմատաբար ավելի մաքուր է:

Կոլտնտեսության ջրարբին չի կարելի թույլատրել մոտենալու պատահական և ոտար անասուններին: Նրանք կարող են վարակել թե ջրարբը և թե անասուններին: Նմանապես չի կարելի թույլատրել կոլտնտեսության անասուններին ոգտվելու պատահական ջրարբից, ամեն կերպ խղճալիքով մանավանդ շուկաների և ճանապարհների ընդհանուր տաշտերից: Անասուններին ուրիշ տեղ փոխադրելիս կամ քաղաք գնալիս՝ պետք է տնտեսությունից հեռու վերցնել դույլ և անասուններին ջրել իրենց ամաններով:

Իր հերթին տնտեսության մեջ մի հիվանդ անասունն էլ կարող է վարակել ուրիշներին. դրա համար կոլիսոզները պիտի դնեն ճանհատական: ջրարբ սահմանելու, այսինքն՝ յուրաքանչյուր անասունին հատկացնել մի դույլ:

Անասուններին պետք է ջրել հասկանալով: Կոլտնտեսություններից շատերում, վորոնք նույնիսկ լավ վորակի ջուր ունեն՝ այնուամենայնիվ անասունները հիվանդանում են, վորովհետև ջրելու ձևն անկանոն է լինում:

Վերևում ասել եյինք, վոր անասուններին պետք է կերակրել ճշտորեն վորոշված ժամանակ, նույնը պետք է կատարել և ջրելու նկատմամբ: Ձիերին պետք է ջրել հատիկավոր կեր տալուց առաջ (գարի, վարսակ), հատիկավոր կեր ուտելուց հետո ջրելիս՝ ձին հիվանդանում է խիթով (սանջու) և մարսողությունը խանգարվում է: Նմանապես չի թույլատրվում ջրել անասունին հյութալի կամ ստամոքսում ուռչող կերից հետո, վորովհետև դրանից կենդանին փքանք է ստանում և հաճախ սատկում: Պետք է

առանձնապէս դժուշդ լինել քրտնած անասունին, մանավանդ ձիերին ջրելուց: Քրտնած կենդանուն կարելի չէ ջրել այն դեպքում միայն, յերբ նա ջուր խմելուց հետո անմիջապէս շարունակում և իր աշխատանքը, բայց այդ դեպքում ևս պետք է ջրել հանդարտ, ընդմիջումներով և առանց շտապեցնելու:

Վերջապէս ջրարբի կարևոր պայմաններից մեկն ևլ այն է, վոր կոլտնտեսութեան հոտն ապահոված լինի առատ ջրով: Կոլտնտեսութեաններից շատերում, բանող անասունը դաշտային աշխատանքների ժամանակ, ջրի պակաս է զգում. յիժն մոտերքում չկա գետ, առու, լիճ կամ լճակ, այդպիսի դեպքերում, կոլտնտեսութեան պարտականութեանն և անասունների համար կազմակերպել ջրի կանոնավոր մատակարարում մոտակա ջրատեղից, հատկացնելով դրա համար ձի, սայլ ու տակառ:

Չպետք է մոռանալ և այն, վոր ծարավ անասունը կերել չի ուտում, նրա մարսողութեանը խանգարվում է և աշխատունակութեանը կորչում:

ՄԱՔՐՈՒԹՅՈՒՆԸ—ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ Ե

Բացի խնամելուց ու կերակրելուց, անհրաժեշտ է հող տանել նաև անասունների մարմնի մաքրութեան վրա, վորը կարևորագույն պայմաններից մեկն է, նրանց առողջութեանն ապահովելու համար: Անասունների մարմնի մաքրութեանը՝ մաշկի, վոտների և սմբակների խնամքը—նրանց առողջութեան գրավականն է:

Անասունի մաշկի վրա մշտապես չ ուտակվում է քրտինք փոշի և կեղտ, իսկ ցամքարից մարմնին քսվում է աղը ու մեղճաք յեկանակին միջատները նրանց մաշկի վրա դնում են իրենց ձվերը, մագածածկ տեղերում գոյանում են վոջիլներ, տիգեր և այլ միջատներ, վորոնք կարող են պատճառել մաշկի վարակիչ հիվանդութեաններ: Չմաքրած անասունը քորվում է, քսվում կոշտ իրերի և կրծոտում է իր մաշկը:

Մարմնի մաքրումը (թիմարը) անասունի ախորժակը լավացնում է, մարսողութեանը կանոնավորում, աշխատունակութեանը բարձրացնում և ապահովում է նրան մաշկի վարակիչ հիվանդութեաններից: Կովերի մաշկի մաքրութեանը նպաստում է կաթնատվութեանը:

Ձիերին անհրաժեշտ է մաքրել որակաւն յերկու անգամ՝ առաւոտները և աշխատանքը վերջացնելուց հետո, յերբ ձին քրտ-

նաժե և և փոշոտ: Անասունին պետք է մաքրել վոչ թե շենքում, այլ դուրսը, ազատ ողում: Մաքրելու համար պետք է ունենալ խողանակ ու քերիչ, ըստ հնարավորության ամեն մի ձիու կամ գոնե յուրաքանչյուր դուգի համար: Մոզանակ չլինելուց, կարելի չէ այդ փոխարինել ձողտի փնջով: Կենդանու մարմինը պետք է մաքրել միմիայն խողանակով: Քերիչը ծառայում է խողանակը մաքրելու համար: Քերիչով թուշլատովում է մաքրել միմիայն ծայրահեղ դեպքերում, յերբ կեղտը խոշոր կտորներով չորացած է լինում մաշկի վրա, այն ել միայն մարմնի փափուկ մասերում: Հապտակ դեպքում, քերիչով հեշտությամբ կարելի չէ վերավորել կենդանու մարմինը:

Կոխողներից շատերում ամենևին ուշադրություն չեն դարձնում տավարի մաքրության վրա, այնինչ մաշկի մաքրությունը մեծ նշանակություն ունի վոչ միայն կաթնատու կովերի նկատմամբ, վորոնց կաթնատվությունը, ինչպես ասացինք, ավելանում է դրանից, այլ և հորթերի, ցեղային ցուլերի և բանող յեղների համար: Տավարին ևս պետք է մաքրել խողանակով, քերիչով և փափուկ շորի կտորով:

Մաքրության տեսակետից ամենից պակաս ուշադրություն, տնտեսությունների մեջ, հատկացնում են խոզերին, մինչդեռ խոզկորների հիվանդություններից շատերը, ինչպես և խոշոր խոզերի վարակիչ հիվանդությունները—կեղտոտության շնորհիվ լայն չափերով տարածվում են:

Անասունների մարմինը մաքուր պահելու համար անհրաժեշտ է նաև նրանց լողացնել, վորը միևնույն ժամանակ և առողջարար ազդեցություն ունի, բայց լողացնելու խնդրում պետք է դորձադրել վորոշ նախազգուշություն, ինչպես որինակ՝ քրտնած կենդանուն չի կարելի ցուրտ ջրում լողացնել և առհասարակ, անասունին սառը ջրում լողացնելուց պետք է խուսափել: Լողացնելուց հետո չի կարելի անասուններին թողնել միջանցիկ քամու մեջ, այլ պետք է հարկադրել նրանց, վոր մինչև չորանալը շարժողության մեջ լինեն, ապա թե վոչ՝ լողացնելով կարելի չէ անասունին ցրտահարության մատնել:

Վոչխարներին լողացնելուց հարկավոր է խուսափել, վորովհետև նրանց բուրդը թրջվելուց հետո լերկար ժամանակ չի չորանում: Վոչխարներին կարելի չէ լողացնել միմիայն խուզելուց առաջ, վոր նրանց բուրդը մաքրվի, այն ել չոր և շոգ յեղանակին: Իսկ վոչխարի մաշկը քոսից բուժելու համար՝ առաջուց նրա

լուրդը խուզում են և ապա լողացնում հատուկ դեղերի լուծույթի մեջ:

Ասածներէց կարելի յե յեզրակացնել, վոր ամենեին կարիք չկա սպասելու, վոր անասունը կեղտոտի և այն ժամանակ միայն մաքրել նրան, այլ պետք և ձգտել, վոր անասունը մշտապես մաքրության մեջ պահվի: Այդ են պահանջում թե կենդանու առողջությունը և թե տնտեսության շահերը:

ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ԽՆԱՄԵԼ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՍՄԲԱԿՆԵՐՆ ՈՒ ԿՃՂԱԿՆԵՐԸ

Զիու վոտքերը պահպանողը—առողջ և կանոնավոր սմբակներն են: Սմբակի արատներն ու ֆլեամվածքները (զանազան տեսակ թեքություններ, վերքեր, ճեղքվածքներ, ներքանի ճմլվածքը և այլն) պատճառում են կենդանուն կաղուծյուն, իսկ կաղացող ձին, ամենքս ել գիտենք, վոր աշխատանքի համար միանգամայն անպիտք ե: Դրա համար, ձիերի սմբակներն առանձնապես լավ խնամք են պահանջում: Սմբակի խնամքը բարդ չե՝ սմբակը պետք ե միշտ մաքուր պահել, հնացած և մաշված յեղջերաշերտը ժամանակին կտրել և պայտել:

Առհասարակ անասունների սմբակների ու կճղակների մաքրությունը պահպանելու համար պետք ե, վոր նրանք կանգնած լինին չոր և մաքուր ցամքարի և չոր հատակի վրա: Ժամանակ առ ժամանակ խոնավ կամ թաց հողի վրա կանգնեցնում են միմիայն չափազանց փխրուն ու դյուրբարեկ սմբակ ունեցող ձիերին:

Սմբակի պատերն ու ներքանը պետք ե մաքրել ու լվալջրով, խոցանակել ողնությամբ, իսկ ներքանի ակոսներէց կեղտն ու աղբը—փայտի կտորով:

Սմբակի մաշված ու հնացած յեղջերաշերտը պետք ե կտրել ղգուռությամբ, վոր կենդանի մասերն ել հետը չկտրվեն:

Առանձին ուշադրությամբ պետք ե հետևել մարուկների սմբակների աճմանը: Նրանց սմբակները մաքրելով և ժամանակին կտրելով, հնարավոր ե լինում սմբակները պաշտպանել անկանոն աճելուց ու զարգանալուց, վորից ձին հետագայում ունենում ե վոտքերի անկանոն դիրք և անկանոն քայլվածք:

Սեթե դաշտային աշխատանքը տեղի յե ունենում փափուկ հողի վրա՝ սովորաբար ձիերին պայտելու կարիք չի լինում, վորովհետե փափուկ հողից սմբակներին վտանգ չի սպառնում, ապա

ուրեմն սմբակները պայտերով պաշտպանվելու կարիք չունենալնդ հաւատարմութիւնը՝ դաշտային աշխատանքների սկզբից լավ ե ձիերի պայտերը հանել և հետեւել միմիայն սմբակների մաքրութեանը և հնացած, ավելորդ յեղջերաշերտը ժամանակին կտրել:

Ստիպան ձմեռն անպայտ ձիերը սառուցի վրա հաճախ սահում, ընկնում և վնասվում են, ուստի ձմեռն դեմ բոլոր ձիերին անհրաժեշտ ե պայտել, և նայած վայրին ու աշխատանքների բնույթին, կարելի յե պայտել բոլոր վտուքերը կամ միմիայն առաջի յերկուսը:

Սմբակների կանոնավորումն ու ձիերի պայտումը բավականին նուրբ արվեստ ե, ուստի այդ գործը պետք ե հանձնարարել փորձված պայտարներին, կանոնավոր սարքավորված դարբնոյում:

Ձի կարելի աչքաթող անել նաև տավարի կճղակների խնամքը, վորովհետեւ հաճախ կճղակների արանքները փնասվում են մանր քարերով ճմվելուց կամ շոտղով վիրավորվելուց: Այդպիսի դեպքերում կճղակների արանքից պետք ե հանել քարը կամ շոտղը և ապա կճղակը լվալ ջրով կամ ավելի լավ ե կրեոլինի լուծույթով, իսկ հնացած, ավելորդ յեղջերաշերտը պետք ե նույնպէս կտրել, ինչպէս ասել եյինք վերևում ձիերի մասին:

Մի սպասիւր անասունի կաղալուն, վոր ուշք դարձնես նրա սմբակին, այլ մշտապէս կանոնավոր խնամիր, վոր կենդանին չկաղա յերբեք:

ՀՂԻ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ՄԱՏՂԱՇՆԵՐԻ ԽՆԱՄԻՐ

Կոտնտեսութիւնում անասունների քանակն աճեցնելու համար անհրաժեշտ ե հիվանդութիւններից առանձին ուշադրութեամբ պաշտպանել հղի անասուններին ու հասունացող մատղաշներին:

Վերևում մենք ասել եյինք, վոր արոտավայրի պայմանները բարերար ազդեցութիւն ունին թե հղի անասունների և թե նրանց արգանդում պտղի առողջական վիճակի վրա: Բայց հոտի մեջ նրանք պիտի լինեն հատուկ հսկողութեան տակ և չպիտի թողնել, վոր յերկար պտտեն, դարիվայրներ յեղնեն ու իջնեն և հողնեն:

Հղի անասունները գոմերում դանվելիս՝ պետք ե հող տանել, վոր ցամքարը լինի չոր և առատ, շինքը ընդարձակ, վորպէսզի նրանք չսեղմվեն և չհրեն իրար:

Մշտական շարժումն ու թեթեւ աշխատանքն անհրաժեշտ են հղի ձիերի համար, բայց ուժից վեր աշխատանքով չի կարելի նրանց ծանրաբեռնել:

Հղինքերին ծննդաբերությունից յերևք շարաթ առաջ պետք ազատել ամեն մի աշխատանքից: Ծնելուց մի քանի որ առաջ մե-
րունների կերը պետք է սահմանափակել, տալով նրանց դյուրա-
մարս ու թեթև սնունդ, խստիվ խուսափելով փքանք պատճառող
հյութալի կամ յեղյամով ծածկված և կամ նեխված կերերից, վո-
րոնք, ինչպես վերևում ասել ենք, հաճախ վիժման պատճառ են
դառնում:

Մի քանի կուտնտեսություններում հղի կովերի մեջ
նկատվում է վարակիչ վիժման բազմաթիվ դեպքեր. այդ հի-
վանդության ժամանակ կովերը վիժում են իրենց հղիության
5—8-րդ ամսում, վորից հորթերը մեծ մասամբ ծնվում են մե-
ռած և կամ ծնվելուց հետո իսկույն մահանում են: Կուտնտեսու-
թյան կովերին այդ հիվանդությունից պաշտպանելու համար
պետք է շատ զգույշ լինել դեպի նորեկ կովերը, մանավանդ,
յերբ նրանց ծննդաբերական որդաններից ծորանք և նկատ-
վում: Այդպիսի կովին պետք է անմիջապես առանձնացնել,
մինչև անասնաբուժը քննելով՝ չհաստատի նրա առողջ լինե-
լը: Ինչ վերաբերում է վիժող կովերին՝ նրանց ևս պետք է խ-
կույն առանձնացնել, վիժված հորթն ու ծինը հավաքելով թաղել
կամ վառել, իսկ շենքն ու սարքավորումը խիստ ախտահանու-
թյան յենթարկել: Բացի դրանից, վիժած կովերի համար պետք է
հատկացվի առանձին ցուլ, վորը վոչ մի դեպքում մյուս կովերին
չպիտի մոտենա:

Ծննդաբերության համար հղի մերունին պետք է տեղավո-
րել մաքուր, լուսավոր և ընդարձակ շենքում, տակին առատորեն
փռել փափուկ և չոր ցածքար: Անասունի հսկողության համար
դրված պիտի լինի հմուտ մարդ, վորը հարկավոր դեպքում կարո-
ղանա ոգնել կենդանուն ծննդաբերության ժամանակ: Ծնելուց հե-
տո մերունին պետք է պահել տաք շենքում և առաջին օրերը տալ
նրան թեթև կեր՝ չոր խոտ և գոլ ջրով պատրաստած թևիկ կամ
այլուրի շփոթ:

Առանձնապես ուշադիր պետք է լինել մատղաշների և նորա-
ծինների նրբազգացությանը, վորովհետև ամեն տարի դրանց մեջ
նկատվում են մասսայական հիվանդություններ և մահացություն
(սպիտակ լուծ, հոդաբեկում), վորոնք զարգանում և տարածվում
են գլխավորապես անկանոն սննդի և անփուլթ խնամքի հետե-
վանքով:

Մատղաշները պահանջում են ընդարձակ, տաք, մաքուր և
ողանցքով ոժտված կացարան, մայրական կաթից կտրելուց՝ նրանց

պետք է հետզհետե ընտելացնել թեթև ու դյուրամարս կերի և նրանց մարմինը պահել մաքրության մեջ:

Միմիայն այդպիսի պայմաններում կոլտնտեսությունը հնարավորություն կունենա մատղաշներին հիվանդություններից պահպանելու, վերով և կապահովի իր հոտի աճեցումը:

ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ՎԱՐՎԵԼ ԲԱՆՈՂ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Մի քանի կոլտնտեսություններում ձիերը և յեղները աշխատանքի յեն լծվում չափազանց յերիտասարդ հասակից: Դրանից ջլատվում են նրանց ուժերը, առաջ են գալիս սրտի, թոքերի և մանավանդ վոտքերի հիվանդություններ և այդ պատճառով բանող անասունները հաճախ ժամանակից առաջ են անպետքանում և ծերանում: Հազվադեպ չէ, յերը մտրուկը յերկու տարեկանից ծանր յաշխատանքի անցնելով՝ մի քանի որում ընդմիշտ կորցնում և իր աշխատունակությունն ու տնտեսական արժեքը:

Ձիերին պետք է ծանր աշխատանքի դնել նրանց յերեք տարին լրանալուց հետո, յերկու տարեկանից ոգտագործել կարելի յէ շատ թեթև աշխատանքների համար միայն: Յիգներին թեթև աշխատանքի կարելի յէ դնել յերեք տարեկանից: Առհասարակ, նույն խակ հասունացած անասունին չի կարելի հարկադրել ուժից վեր աշխատանքի, այդպիսի աշխատանքով նա վոչ մի ոգուտ չի բերել, այնինչ ջլատելով իր ուժը՝ շուտով կանպետքանա:

Կոլտնտեսությունների բրիգադներում լինում են դեպքեր, յերը մի բրիգադում հավաքվում են ուժեղ անասունները, մյուսում՝ թույլերը, դրանից բանող անասունները մեկ բրիգադում ծանրաբեռնված ուժասպառ են լինում, այնինչ մյուսում՝ թերի յեն աշխատում: Դրա համար կոլտնտեսությունում անհրաժեշտ է կիրառել աշխատանքի հավասարաչափ բաշխում անասունների վրա, հաշվի առնելով նրանց ուժն ու աշխատունակությունը:

Կոլտնտեսությունները պետք է նաև խստորեն պայքարեն աշխատանքի ընթացքում բանող անասունների հետ տեղի ունեցող կոպիտ և անխնա վերաբերմունքի դեմ: Յիրբեմն պատահում է, յերը անողոք հարվածներով անասունին նույնիսկ վիրավորում: Ֆլասում են: Նման վերաբերմունքից վոչ մի ոգուտ չկա՝ դրանից անասունները կարող են յուրացնել միմիայն վատ սովորություններ՝ անհնազանդություն, կծել ու քացի տալ: Մինչդեռ կարելի յէ վստահ լինել, վեր խնամքի, փայփայանքի և մեղմ վերաբերմունքի:

դիմաց անասունը միշտ կարգարացնի իր վրա դրված պարտականությունները:

ԲԱՆՈՂ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԼԾԱՍԱՐԲԻ ՈԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Յեթե տնտեսությունը բանող անասունների լծասարքի վրա ուշադրություն և իր ժամանակին խնամք տանի՝ դրանով մեծ չափով պաշտպանած կլինի իր անասուններին մի շարք հիվանդություններից:

Անասունների լծասարքը շատ հաճախ վարակիչ հիվանդությունների պատճառ և լինում, ինչպես որինակ՝ սիբիրախտի, խլ-լախտի, քոսի, դաբադի և այլն: Մինչդեռ, կոտնտեսությունում հաճախ լծասարքը վերոջ կենդանիներին չի պատկանում, այլ ոգտագործվում և պատահաբար՝ աշտը մեկն և դործածում, վաղը՝ մյուսը: Անասունների մեջ վարակիչ հիվանդություն հայտարարվելիս, լծասարքի ոգտագործման աղաչիսի ձեռ կարող և մշտապես թյուրիմացություններ պատճառել և հնարավորություն չի տալիս հաստատապես վորոշելու, թե վոր լծասարքով և ոգտվել հիվանդ կենդանին:

Դրա համար նպատակահարմար և, և շատ կարևոր, կոտնտեսություններում կիրառել «անհատական» լծասարքի ոգտագործումը, այսինքն՝ յուրաքանչյուր բանող անասուն պետք և ունենա իրեն հատկացրած մշտական լծասարքը և իրար հետ չխառնելու համար՝ պետք և համարակալել:

Անհատական լծասարքն ունի և այն առավելություն, վոր նա հարմարեցրած և լինում տվյալ կենդանու մարմնին՝ վոչ լայն լինի և վոչ ել նեղ, իսկ յեթե այդպես չի լինում, պատահական լծասարքով ոգտվելուց՝ կենդանու մարմնի վրա առաջանում են դանադան քերծվածքներ, ճավվածքներ, ճարդվածքներ, վերքեր, վորոնք անասունին տանջանք են պատճառում և լսանդարում նրա աշխատանքը:

Դաշտային աշխատանքներն սկսվելուց առաջ, տնտեսությունը պիտի վերանայի բանող անասունների լծասարքը՝ չափի, նորոգի, պետք յեղած տեղերում թաղիք կարի և կենդանու մարմնին հարմարացնի:

ԿՈՒՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՊԻՏԻ ՍԵՐՏ ԿԱՊ ՊԱՀՊԱՆԻ ԱՆՍՆԱՐԻԺԻ ՀԵՏ

Կոտնտեսության անասուններին վարակիչ հիվանդություններից զերծ պահելու համար, անհրաժեշտ և անասունների ամեն մի հի-

վանդության, մահացության կամ նույն իսկ կասկածի դեպքում, անմիջապես տեղեկացնել անասնաբուժին:

Անասնաբուժը տեղում պարզելով և վերոշելով հիվանդության բնույթն ու մահացության պատճառը, վարակիչ հիվանդություն հայտարարելիս՝ գործնական ցուցմունքներ կտա և միջոցներ կգործադրի հիվանդության տարածումը կանխելու համար: Բացի դրանից, նա, քննելով մնացած անասուններին, կարող ե վերոշել, թե արդյոք նրանց մեջ կա չի տարածվել վարակը:

Առհասարակ, կուտնտեսության անասունների անասնաբուժական հետադոտությունը պետք է կատարվի վոչ միայն հիվանդություններ հայտարարված դեպքերում, այլ անհրաժեշտ ե ժամանակ առ ժամանակ, գոնե տարեկան մի յերկու անգամ կուտնտեսության ամբողջ հոտն անասնաբուժական ընդհանուր հետադոտության յենթարկել (մանավանդ ձիերին):

Այդպիսի հետադոտությունն անասնաբուժին հնարավորություն ե տալիս հայտարարելու վարակիչ հիվանդությունն և գործադրելու վարակի տարածումը կանխող միջոցառումներ: Նույն հետադոտության ժամանակ անասնաբուժը կարող ե հայտարարել նաև անասունների առողջապահական պայմանների բացերը և գործնական ցուցմունքներ տալ, թե ինչպիսի պետք ե վերացնել այդ բացերը:

Այդպիսով, ուրիմն, անասնաբուժը պիտի այցելի կուտնտեսություն վոչ թե անասունների հիվանդության մասին տեղեկանալով միայն, այլ նաև հիվանդության դեպքերից անկախ, տարեկան գոնե մի-յերկու անգամ, կուտնտեսության ընդհանուր հոտի առողջական վիճակն ստուգելու համար:

ԻՆՉՊԵՍ ՊԵՏԲ Ե ՎԱՐՎԵԼ ՆՈՐԵԿ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ՀԻՎԱՆԳՆԵՐԻ ՀԵՏ

Ուրիշ տեղից կուտնտեսություն բերված նոր անասունին միշտ պետք ե համարել կասկածելի և գոնե յերկու շաբաթվա ընթացքում պահել նրան կուտնտեսության մյուս անասուններից առանձնացրած և հատուկ հսկողության տակ:

Այս կանոնը պիտի շատ խիստ կիրառել, վորովհետե նոր բերված անասունը կարող ե թեև ըստ յերևույթին, արտաքին տեսքով առողջ, բայց իրոք վարակված լինել: Յերբ անասունը վարակվում ե՝ նա անմիջապես չի հիվանդանում, այլ հիվանդանում ե մի քանի որ (յերբեմն 2—3 շաբաթ) անցնելուց հետո միայն:

Այդ ժամանակս միջոցը կոչվում է հիվանդության թխարկության (ծածուկ) շրջան, վորը միշտ պետք է հիշել ոտար տեղից նոր անասուն բերելիս:

Յեթն նոր բերված անասունն արդեն վարակված է և մենք առանց նկատելու այդ, խառնենք նրան տնտեսության մյուս անասուններին հետ՝ մի քանի որ անցրելուց հետո նրա հիվանդությունը կհայտաբերվի և նա պատճառ կլինի շատ շատերի վարակվելուն:

Այդ չարիքից խուսափելու համար պետք է ա) նոր անասուններ ձեռք բերել վարակիչ հիվանդություններից ապահով վայրերում, նախորոք այդ մասին տեղեկանալով շրջանի անասնաբուժից: Բ) նոր անասուն ձեռք բերելիս՝ պահանջել անասնաբուժի վկայականը կենդանու առողջական վիճակի մասին, իսկ յեթե հնարավոր լինի, անասնաբուժի ներկայությամբ քննել նրան: Գ) նոր բերված անասունը գոմ չմտցնել և արոտավայր չքշել: այլ, ինչպես վերևում ասացինք, 2—3 շաբաթ խնամել, կերակրել և ջրել առանձին շենքում: Յեթն այդ ժամանակամիջոցում, առանձնացրած պայմաններում անասունը նույնիսկ հիվանդանա, նա այլևս չի կարող տնտեսության մյուս անասուններին վարակել, իսկ յեթե նույն ժամանակամիջոցում առողջ մնա՝ կարելի չե վատահ լինել, վոր նա առողջ է և ընդհանուր հոտին խառնելն այլևս վտանգավոր չէ:

Այս կանոնի կիրառումը դժվարություններ չի ներկայացնում, մինչդեռ նրա ոգուտը շատ մեծ է, վորովհետև տնտեսությունը ապահոված կլինի մեծ չարիքից:

Սակայն պետք է ասել, վոր կան վարակի տարածման նաև այլ մի շարք աննկատելի ճանապարհներ, վորոնցով անասնակի կերպով, տնտեսության մեջ կարող են յերևան գալ զանազան վարակիչ հիվանդություններ: Այդպիսի դեպքերում, հիվանդությունը կասեցնելու և նրա տարածումը կանխելու համար պահանջվում են շուտափուլյթ և վճռական միջոցառումներ, և վորքան շուտ գործադրվեն դրանք, այնքան արդյունավետ կլինի հետևվանքը:

Վարակիչ հիվանդության հայտաբերվելու, կամ կասկածի դեպքում, կարևորագույն պայմանն է հիվանդ կամ կասկածելի անասունին ընդհանուր հոտից կամ գոմից անմիջապես հեռացնել և առանձնացնել. այնուհետև, նույն շենքից պետք է դուրս հանել բոլոր, ըստ յե ճեղքի մտնող անասուններին և շենքը մաքրել:

լուց և արտահանելուց հետո միայն, նորից ներս մտցնել առողջ-
ներին:

Իսկ վորտեղ կարելի չէ տեղավորել հիվանդ կամ կասկածելի
անասուններին: Այդ նպատակի համար յուրաքանչյուր կոտորն-
տեսություն պիտի հատկացնի հատուկ շենք մի քանի բաժան-
մունքներով, վորը կոչվում է «մեկուսարան»: Այդ շենքը հնարա-
վորին չափ հեռու պիտի լինի տնտեսության գոմերից: Մեկուսա-
րանին սպասարկելու համար նշանակված պիտի լինեն հատուկ
մարդիկ, վորոնք պետք է նույնպես հեռու լինեն և առնչություն
չունենան առողջ անասունների հետ:

ԱՆԱՍՆԱԳԵՐԵԶՄԱՆՈՅՐ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՇՆԱՄԻՆ Ե

Մեզանից ամենքը, շատ անգամ, անշուշտ հանդիպած կլինեն
դաշտերում, ձորերում, ճանապարհի վրա և այլ տեղերում ան-
հոգաբար զցած անասունների դիակների: Այդպիսի վերաբեր-
մունքը դիակների հետ, ինչպես վերևում շիշտեցինք, ֆեասարարու-
թյուն է գյուղատնտեսության բնագավառում, վորովհետև ան-
խնամ թողած դիակը նեխվելով և հոտելով՝ իր շուրջը վարակ է
տարածում: Այդպիսի դիակը վարակում է թե հողը և թե ջրերը:
Դիակից թափված վարակիչ հեղուկը (արյուն, շարավ, թարախ)
չորանալով խառնվում է փոշու հետ և քամու միջոցով տարած-
վում այս ու այն կողմ: Վայրի գազաններն ու շներն իրանց հեր-
թին, պատառտելով դիակը, տառում են միան ու վոսկորները
այլ և այլ տեղեր և նույնպես տարածում վարակը: Վարակը տարա-
ծելու մեջ վատ համբավ են վայելում նաև թռչունները: Յեվ վեր-
ջապես ճանճերն ու այլ միջատները, նստելով դիակի վրա, իրենց
թաթերով վարակը տեղափոխում են առողջ կենդանիների ու մարդ-
կանց մեջ: Քերբեմն վարակը մնում է հողի մեջ շատ յերկար, նույն-
իսկ տարիներ: Այդպիսի վայրերը համարվում են վարակիչ հի-
վանդության մշտական բուն, վորովհետև հաճախ, հետագա տա-
րիները, նույն տեղում անասուններն արածելիս, վարակվում են
միևնույն հիվանդությամբ: Շատերը չգիտենալով այս հանգամանքը
և սխալմամբ յենթադրելով, վոր անասունը կարող է վարակվել
միմիայն հիվանդ անասունից, արոտավայրում հանկարծակի վա-
րակիչ հիվանդություն հայտարարվելիս՝ համառ կերպով պնդում
են, թե հիվանդությունն առաջ և յեկել «ինքն իրեն», առանց

մտքովն անցկացնելու, վոր հիվանդության պատճառը արոտա-
վայրի վարակված հողն եւ յեղել:

Ուրեմն պարզ եւ, վոր անփուլթ ու անխնամ կերպով դուրս
դցած մի դիակ, լինի դա խոշոր անասուն, վոչխար, շուն կամ
թռչուն՝ միևնույնն եւ, կարող եւ հարյուրավոր անասունների եւ մարդ-
կանց հիվանդանալու պատճառ դառնալ:

Վարակիչ հիվանդություններն այդպիսի ճանապարհներով
չտարածելու համար, անհրաժեշտ եւ յուրաքանչյուր կոլտնտեսու-
թյունում կազմակերպել անասնագերեզմանոց, վորտեղ եւ պետք ե
խորը թաղվեն, առանց բացառության, խոշոր եւ մանր անասուն-
ների ու թռչունների դիակները:

Անասնագերեզմանոցի համար պետք ե հատկացնել բարձր,
բաց ե չոր հողամաս, մեծ ճանապարհներից, արոտավայրերից ու
ջրատեղերից հեռու: Ձորակներում, առուների ու գետերի յեզեր-
քին կամ ճանապարհների մոտ դիակներ թաղելը շատ վտանգա-
վոր ե:

Կենդանիների մուտքն անասնագերեզմանոց պետք ե արգել-
ված լինի. դրա համար անասնագերեզմանոցի շուրջը պետք ե խոր
փոս փորել, իսկ յեթե հնարավոր ե՝ նաեւ շրջապատել պարիսպով
կամ ցանկապատով:

Անասունների դիակը տնտեսությունից դուրս հանելու համար,
շատ անգամ կոլտնտեսություններում ոգտվում են առաջին պատա-
հած սայլով, վոր չափազանց վտանգավոր ե: Դիակները անասնագե-
րեզմանոց տեղափոխելու համար անհրաժեշտ ե ունենալ հատուկ
սայլ, վորն ուրիշ նպատակների համար չպետք ե ոգտադրծել,
վորովհետեւ դիակը տեղափոխելուց հետո սայլի վրա միշտ մնում
ե վարակ: Նպատակահարմար ե սայլը պատել միջից թիթեղով,
վորպեսզի հաճախակի ակտահանության յենթարկելը հեշտ լինի:

Անասնագերեզմանոցում պետք ե միշտ, նախորոք պատրաստ-
ված լինեն մի քանի գերեզմանափոսեր, վորպեսզի դրանց պա-
կասության պատճառով դիակը, մանավանդ ամառվա շոգին, փա-
մերով բացթյա չմնա, այլ անմիջապես թաղվի:

Դիակները պետք ե թաղել խոր, յերկու մետրից վոչ պակաս
փոսում, վորպեսզի վայրի գազաններն ու շները չհասնեն ու չպա-
տահոտեն:

Դիակի մորթը, առանց անասնաբուժի թույլատվության
չպետք ե քերթել, մանավանդ, յերբ անասունը սատկած լինի մի-

ընթացողից. այդպիսի մոբիլութեան վրայ միայն անասունները, այլ և մարդիկ հեշտութեամբ կարող են վարակվել:

Անասնազերծմանոց կադմակերպելու համար միմիայն հոգաբարձու հատկացնելով չի կարելի սահմանափակվել: Անասնազերծմանոցը կանոնավոր պահելու համար պետք է մշտական հսկող աչք և խնամող ձեռք. դրա համար, մեծ կոլտնտեսութեաններում լավ և հատուկ սպասարկող մարդ ունենալ, վորին կարելի կլինի հանձնարարել փոսերը փորել, դիակները տեղափոխել, հնարավոր դեպքերում դիակներին մորթը քերթել և սայլի վրա խնամք տանել:

ԱՆԱՍՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՆՏԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Անասուններին հիվանդութեաններից պաշտպանելու կանոններն այս գրքույկում նկարագրելիս, հաճախ մատնանշել ենք, վոր անհրաժեշտ և անասնաբուժի խորհուրդն ու ցուցմունքը:

Ինչ խոսք, վոր լավ կլինի, յետի յուրաքանչյուր խոշոր անասնապահական կոլտնտեսութեան ունենալ իր անասնաբուժը կամ գոնե բուժակը: Բայց անասնաբուժ մասնագետներ քիչ են և թեև նրանց թիվը տարեց տարի աճում է, բայց դեռ ևս յուրաքանչյուր կոլտնտեսութեան մասնագետ տալու հնարավորութեան չկա: Ներկայումս մի անասնաբուժը հարկադրված է սպասարկելու մի քանի, իսկ հաճախ նույնիսկ տասնյակ կոլտնտեսութեաններին:

Այդ պատճառով նրանց պետք է ոգտագործել հնարավորին չափ խելացիորեն և նպատակահարմար: Նպատակահարմար ոգտագործումը կայանում է նրանում, վոր ամեն մի պատրաստված անասնաբուժ կամ փորձված անասնաբուժակ պետք է կատարի աշխատանքի այն մասը, վոր պահանջում է բարձր գիտութեան ու փորձառութեան, իսկ յերկրորդական և տեխնիկական աշխատանքի համար անհրաժեշտ է կոլտնտեսին անդամներին պատրաստել անասնաբուժութեան ոժանդակող աշխատակիցներ, վորոնք կարողանան անասնաբուժական միջոցառումներն իրագործել մասնագետի ցուցմունքների համաձայն և նրա ղեկավարութեան տակ:

Դրա համար կոլտնտեսութեանը պիտի առաջ քաշի իր անդամներից այդ գործին համապատասխանող թեկնածուներ և կարճատև կուրսերում պատրաստի նրանցից՝ ա) անասնաբուժական սանիտարներ, վորոնք կկարողանան հիվանդ անասուններին առաջին ռզնութեան հասցնել թե՛ դաշտային աշխատանքների ժամանակ և թե՛ տնտեսութեան մեջ. բ) ախտահանողներ, վորոնք կհսկեն տնտեսութեան շենքերի, մուրհների, լծասարքի և այլոց

մաքրությանը և անհրաժեշտ դեպքերում ախտահանությունն կանեն. գ) պատվաստողներ, վորոնք տեխնիկական մեծ ոգնությունն կտան անասնաբուժին պատվաստումների ժամանակ:

Հասկանալի յե, վոր անասնապահության բարեկամութեամբ պահանջում ե և վորոշ դրամական միջոցներ, ապա ուրեմն, կուտնտեսությունն իր միջոցներից հատուկ գումար պիտի հատկացնի անասնաբուժարանի կառուցման, նրա սարքավորման, գործիքների և դեղորայքի համար, վստահ լինելով, վոր այդ ծախսերը կարճ ժամանակում կհատուցվեն անասունների հիվանդությունների և մահացության նվազումով:

Զմոռանանք արձանագրելու և այն, վոր անասուններին խնամելու և պահպանելու գործը կուտնտեսություններից շատերում հանձնվում ե հաճախ անձեռնհաս ու անկարող անդամներին, նույնը՝ ինչ վոր ասել եյինք տավարածի նկատմամբ, և բացի դրանից, անասունների սպասարկությունը մեծ մասամբ կրում ե պատահական բնույթ—անասունների խնամքն այսօր տանում ե մեկը, վաղը—մյուսը, այնուհետև ուրիշը և կամ միևնույն անասունին մեկը կերակրում ե, մյուսը՝ ջրում, յերրորդը՝ մաքրում և այդպես անվերջ: Դա շատ մեծ սխալ ե, վորովհետև սպասարկողներն մշտական փոխվելուց անասունը չի ընտելանում նրանց և անհանգիստ ե լինում, իսկ սպասարկողներն իրենց հերթին հնարավորությունն չեն ունենում անասունին ուշադրութեամբ դիտելու և նրա մեջ փոփոխություններ յերևալու դեպքում ժամանակին նկատելու և համապատասխան միջոցներ գործադրելու:

Անասունների առողջական վիճակը կապահովվի այն ժամանակ միայն, յերբ նրանց խնամքն ու հոգատարությունը տնտեսությունը կհանձնի հմուտ, իրազեկ, աշխատասեր և բարեխիղճ կուտնտեսականներին և կվերացնի դիմադրությունը, հանձնարարելով ամեն մեկին վորոշ թվով անասուններ և պահանջելով նրանցից նրանց սպասարկած անասունների համար լրիվ պատասխանատվություն:

* * *

Այս գրքույկում բոլոր մեր ասածները գործադրելով, հնարավոր և կուտնտեսության անասնապահության վիճակը բարելավել այն դեպքում միայն, յերբ այդ աշխատանքներում մասնակցեն կուտնտեսության աշխիջն ու հասարակայնությունը: Դրա համար անհրաժեշտ ե՝

1. Յուրաքանչյուր կոլտնտեսությունում ընտրել անասնաբուժական և անասնապահական լիազորներ և հասարակական աշխատանքի կարգով տալ նրանց առաջադրություններ, վորպեսզի նրանք հետևեն թե՛ գոմերում, թե՛ դուրսը և թե՛ դաշտային աշխատանքների ժամանակ անասունների վրճակին, այս գործույթում ասվածների համաձայն և հաշվետու լինեն կոլտնտեսության ընդհանուր ժողովներում իրենց աշխատանքների մասին:

2. Արտադրական խորհրդակցության առաջ դնել կոլտնտեսության անասնաբուժական դրության հարցը, քննարկել նկատված բացերը, սխալներն ուղղելու միջոցներ ընտրել և հետևել, վոր ընդունված վորոշումները թղթի վրա չմնան, այլ անմիջապես կիրառվեն կյանքում:

3. Դյուդխորհրդից և կոլտնտեսության վարչությունից պահանջել զեկուցում տալ և իրազեկ անել կոլտնտեսականներին, թե ի՞նչ և կատարված անասունների պահպանության բնագավառում:


4. Անասուններին սպասարկող կոլտնտեսությունների մեջ սոցմրցում և հարվածայնություն ծավալել, անասնապահության որինակելի արդյունքներ ստանալու համար:

5. Անասնապահության մեջ ունեցած բացերի և նվաճումների մասին գրել կոլտնտեսության պատի թերթում, այլ և շրջանային և կենտրոնի թերթերում:

Ներդրավելով կոլտնտեսության հասարակական ակտիվն այս աշխատանքների մեջ, հնարավոր ե կարճ ժամանակամիջոցում հասնել վճռական հաջողությունների անասնապահության բնագավառում:

Յ Ա Ն Կ

1. Առաջաբանի փոխարեն	3
2. Անասնապահության մեջ յեղած չարիքները . . .	5
3. Անասունների հիվանդության պատճառները . .	7
4. Ինչպես կարելի յե կանխել անասունների հիվան- դությունը	8
5. Անասունն ել առողջ շենքի կարիք ունի	8
6. Անասունների շենքերը պետք ե մաքուր պահել .	10
7. Շենքերի ախտահանությունը	10
8. Լավ կերի ե կանոնավոր կերակրման նշանակու- թյունը	12
9. Անասուններն առողջ արոտավայրի կարիք ունեն	13
10. Լավ տավարածի հոտն առողջ ե լինում	15
11. Առատ ե առողջ ջուր	16
12. Մաքրությունը—առողջություն ե	18
13. Ինչպես պետք ե խնամել անասունների սմբակներն ու կճղակները	20
14. Հղի անասունների ե մատղաշների խնամքը . . .	21
15. Ինչպես պետք ե վարվել ըանող անասունների հետ	23
16. Բանող անասունների լծասարքի ոգտագործումը .	24
17. Կոլտնտեսությունը պիտի սերտ կապ պահպանի ա- նասնաբուժի հետ	24
18. Ինչպես պետք ե վարվել նորեկ անասունների ե հիվանդների հետ	25
19. Անասնագերեզմանոցը վարակիչ հիվանդություննե- րի թշնամին ե	27
20. Անասնաբուժությունը կոլտնտեսությունում . . .	29



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0002166

ԳԻՆԸ 40 ԿՈՊ.

A $\frac{II}{24291}$

064.



Գր. Արությունյան

Как защитить животных колхоза от болезней